ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՊԱՐԱԳԾԵՐԸ

JEL: Y30

Տարիներ առաջ լույս տեսած՝ Ա.Մարկոսյանի և Ա.Սահակյանի «Պետական գույքի կառավարում» (2015) ուսումնական ձեռնարկի վերաբերյալ նկատել էի, որ այն իր արծարծումներում դժվար է ամփոփել զուտ ծրագրային առումով «ուսումնական ձեռնարկ սովորական հասկացության մեջ»[1]: Նույնը բնորոշ է նաև Ա.Մարկոսյան, Է.Մաթևոսյան, Մ.Մարկոսյան, Ա.Մարկոսյան հետազոտական խմբի «Տնտեսական անվտանգություն» ուսումնամեթոդական ձեռնարկին[*]:

Հարկ է նկատել, որ տնտեսական անվտանգության խնդիրը գիտական գրականության մեջ որոշակի սրություն է ստացել հատկապես խորհրդային համակարգի կազմալուծումից հետո, երբ խարխլվեցին տնտեսական կապերը, և նախկին հանրապետությունների պահվածքը ժամանակի մեջ արդեն պահանջում էր նոր դասավորություն՝ կապված ազգային շահերի պաշտպանական միջոցառումների հետ: Կարելի է հանդիպել «տնտեսական անվտանգություն» հասկացության այլևայլ սահմանումների: Եթե ելակետ ունենանք այն ճշմարտությունը, որ ընդհանրապես բոլոր սահմանումները մոտավոր են, ապա նույնը վերաբերում է նաև «տնտեսական անվտանգություն» հասկացությանը: Առաջադրվող կողմնորոշումների տարբերակներում՝ հեղինակների մտակառույցում դա ներկայացնում է տնտեսության այն վիճակը, «երբ ազգային շահերի իրացումը երաշխավորող որոշակի թվով կենսականորեն կարևոր տնտեսական գործունեության ոլորտներում ապահովվում է անհատի, պետության և հասարակության անընդմեջ, երկարատև և նպատակաուղղված այնպիսի առաջընթաց, որի դեպքում ազգային տնտեսության նկատմամբ սպառնալիքների առաջացման հնարավորությունը և ազդեցության չափը դառնում է նվազագույն»[2]:

Ինչ խոսք, հասկացությունն ունի իր բարդությունը, թե՝ որո՞նք են պետության տնտեսական անվտանգության ռազմավարական հիմնադրույթները, ի՞նչ կառուցակարգ է դա ապահովելու, ինչպե՞ս են հաշվի առնվելու երկրի տնտեսական շահերը տարածաշրջանում և համաշխարհային տնտեսության

---

[1] **Սարինյան Ռ.Ն.,** Ուրվագիծ արդի հայ տնտեսագիտական մտքի պատմության, III, Եր., 2019, էջ 197:

[*] **Մարկոսյան Ա.Խ., Մաթևոսյան Է.Ն., Մարկոսյան Մ.Ա., Մարկոսյան Ա.Ա.,** Տնտեսական անվտանգություն, Եր., «Տնտեսագետ» հրատ., 2024, 334 էջ:

[2] **Սարինյան Ռ.Ն., Մարկոսյան Ա.Խ., Մաթևոսյան Է.Ն., Մարկոսյան Մ.Ա., Մարկոսյան Ա.Ա.,** նշվ. աշխ., էջ 22:

հարափոփոխ պայմաններում, ի՞նչ հանգամանքների պարագայում է հնարավոր ձեռք բերել տնտեսական անվտանգության բարձր մակարդակ, և այդ հարցում ի՞նչ փորձ ունեն տնտեսական անվտանգության մակարդակ ունեցող երկրները, եթե հաշվի առնենք, որ սույն հարցադրումները ներքին կապերի բացահայտման իմաստով հաճախ պայմանական են և իրենց տրամաբանության մեջ հակասական դրսևորումներ ունեն: Խնդիրը դիտելով անցած ժամանակի ձեռքբերումների, բացթողումների ու թերությունների հեռադրության մեջ՝ հեղինակները նկատում են, որ, ըստ էության, սահմանված չեն ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման գերակա ուղղությունները, դրանց ձևավորման սկզբունքները, ինչը «սուբյեկտիվ է դարձնում» ոչ միայն ծրագրերը, այլև դրանց հիմքի վրա քաղաքականությունը՝ կառուցված առանց տեսամեթոդական որոշակի հիմքի: Առանց վերջինիս՝ չի կարող լինել ազգային անվտանգության նորաստեղծում, իսկ այդ ուղղությամբ ընդունված փաստաթղթերը կմնան որպես գաղափար: Իրավացի էր Դավիթ Անանունը, թե՝ ազգության «ներքին և արտաքին» խորհուրդը տնտեսական խնդիրն է, որի համար անհրաժեշտ է ստեղծել ընդհանուր տնտեսական պատվանդան: Խոսքն Արցախի և Հայաստանի՝ որպես տնտեսական անվտանգության ազգային գաղափարախոսության կարևոր բաղադրիչների մասին է: Իսկ իրողությունն այն է, որ 2020 թ. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության վերաբերյալ փաստաթուղթը «չբռնեց ժամանակի քննությունը»[3]:

Ուրվագծելով Հայաստանի Հանրապետության ներքին (տնտեսական կառուցվածքային ձևախեղում, ցածր մրցունակություն, մենաշնորհի առկայություն, սոցիալական շերտավորում, կոռուպցիա և այլն) և արտաքին (տնտեսական կցորդի վերածվել, արտաքին պարտք, կախվածություն ներմուծումներից և այլն) սպառնալիքները՝ աշխատությունը պատկերացում է տալիս աղքատության, սննդամթերքի սպառման մակարդակի, ժողովրդագրության պատկերի, արտաքին պարտքի վերաբերյալ կատարված տեղաշարժերի մասին: Հարկ է ընդգծել, որ աշխատության մեջ կիրառված մատրիցային եղանակը հնարավորություն է տվել առավել պատշաճ տեսունակությամբ որոշելու «տնտեսության վտանգավորության աստիճանն ըստ որոշակի ցուցանիշների» ինչպես բուն երկրի ներսում, այնպես էլ Հարավային Կովկասի հանրապետությունների տնտեսական անվտանգության ընդհանրությունների, առանձնահատկությունների և վտանգվածության աստիճաններով:

Որքան էլ գլոբալացումն իր հակասականությամբ և ոչ միանշանակությամբ նախադրյալներ ունի՝ ինտեգրվելու համաշխարհային հանրությանը, նույնքան էլ պարտադրող ուժ՝ տնտեսական անվտանգություն ապահովելու փոքր տնտեսությամբ այնպիսի երկրի համար, ինչպիսին Հայաստանն է: Իսկ, ինչպես վկայում են հանրապետության տնտեսական անվանգության գնահատման և վերլուծության արդյունքները.

«- 1995-2022 թթ. ժամանակահատվածում տնտեսական անվտանգության ցուցանիշները դեռևս շատ ցածր մակարդակի են,
- տնտեսական անվտանգության գնահատման որոշակի ցուցանիշներ վատթարացել են՝ սպառնալիք համարվելով երկրի համար,

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 65:

- տնտեսական անվտանգության մակարդակը բարելավելու նպատակով անհրաժեշտ է, առաջին հերթին, ուշադրություն դարձնել մակրոտնտեսական այն ցուցանիշների բարելավմանը, որոնք, ըստ գնահատման մեթոդաբանության, վտանգավոր տիրույթում են»[4]:

Այստեղ են առնչվում իրականի և երևակայականի սահմանները, այն բանի գիտակցումը, որ տնտեսական անվտանգությունը Հայաստանի համար ունի սուբստանցիոնալ նշանակություն: Հետևապես՝ հարցը տեսականից անհրաժեշտ է վերածել գործնական ծրագրի: Իր վերլուծական արծարծումներում այս գաղափարն է խտացնում գրախոսվող աշխատության հայտը:

Ռոբերտ Սարինյան
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

[4] Տե՛ս նույն տեղը, էջ 286–287: